

ՈՒՅԵՐԻՄ ԹՃՆԱՄԻՍ

(Մարկ Տուէն)

Ուրախ, համարեա թէ, խենդլուկ-խնդամիտ տրամադ-
րութեան մէջ էի: Հէնց ալն բոպէին, երբ պատրաստուել էի
մոմը զլանակիս տանելու, առաւօտեան փոստը բերին: Առա-
ջին անգամից աչքիս ընկնող բանը նամակներից մէկի հպս-
ցէի ծանօթ գիրն էր, որ ուրախութեամբ համակեց ինձ: Նա-
մակը մօրաքոյր Մէրիիցն էր: Աշխարհիս երեսին, իմ ծնող-ազ-
գականներից լետոյ, ամենից շատ նորան էի սիրում և լար-
դում: Նա իմ մանկութեան կուռքն էր: Հասուն տարիքը, որ
ալնքան պատանեկան լափշտակութիւն է ոտքի տակ տալիս,
կորցնում, անկարող եղաւ նորան իւր գահուլքից գլորել: Ո՛չ
ալդ շրջանը միալն արդարացրեց և հաստատեց նորա իրա-
ւունքներն ալդ նկատմամբ և նորա գլորումն անկարելի բա-
ների շարքը դասեց: Որպէս զի ցոյց տամ, թէ մինչ որ աս-
տիճան անսահման էր նորա ազդեցութիւնն ինձ վրալ, մի
օրինակ կըբերեմ: Վաղուց, շատ վաղուց էր դադարել ամի ծխիրս
նախադասութիւնը իւր ազդեցութիւնը ցոյց տալուց և միալն
մօրաքոյր Մէրին էր, որ կարող էր դեռ ևս մի փոքր շարժել
իմ ընդարմացած խիղճս և նորա մէջ դեռ ևս զարթեցնել
կեանքի նշուներ՝ ալդ տեսակէտից: Բայց այս աշխարհիս վը-
րալ ամեն բան իւր սահմանն ունի: Վերջապէս հասաւ ալն
երջանիկ օրը, երբ նոլն իսկ մօրաքոյր Մէրիի խօսքերն ան-
գամ դադարեցին ինձ վրալ ազդելուց: Ես երջանիկ էի, երբ
ալդ օրը հասաւ: ոչ միալն երջանիկ, ալլ և շնորհապարտ, ո-
րովհետեւ ալդ օրուալ մալր մտնող արեւը իւր հետ առաւ և ընդ
միշտ ալն միակ արդելքը, որ կարող էր խանգարել մօրաքրոջս
ներկայութեան վալելքը: Նորա որոշումը՝ թէ ամբողջ ձմեռը
մեզ հետ կանցնէ, ըստ ամենալնի հաճելի նորութիւն էր: Ալն
ինչ նա ալդ երջանիկ օրից լետոյ էլ նոլնչափ տոկունութեամբ

ինչպէս և առաջ, համոզում էր ինձ թողնել իմ կորստաբեր սովորութիւնս, բայց ի հարկէ, հասկանալի է, իզուր չէնց որ նա կշռափէր այդ հարցը, ես իսկոյն հանգիստ, խաղաղ-բաւականութեան, անտարբերութեան, բացարձակապէս քար-սիրտ-անտարբերութեան վիճակ էի ընդունում։ Ուստի և նորա նշանաւոր լմեկ մօտ անցնելու» մի քանի շաբաթն անցաւ ինչպէս քաղցր երազ և ես հանգիստ ու բաւարարութիւն ստացած էի համարում ինձ։ Ես աւելի բաւականութիւն կստանալի իմ սիրած մոլութիւնից, եթէ իմ չքնաղ տանջողս ևս ծխող և նոյն սովորութիւնը պաշտպանող լինէր։ Նորա ձեռագրի վրայ ձգած հալեացքս միմիայն բաւական էր ապացուցանելու իմ առաջ, որ ես մեծ անհամբերութեամբ էի սպասում նորա կրկին տեսութեանը։ Նամակը բացի, նախապէս իմանալով, թէ մէջը ինչ պիտի գտնեմ գրած։ Ե՛, ինչ ասել կուզի, որ այդպէս էլ էր։ Նա գալիս է. գալիս է հէնց այս օրուայ առաւօտեան գնացքով։ Ա՛յն լոպէ իրաւունք ունէի սպասելու նորան։ Զափաղանց բաղտաւոր եմ և ուրախ,—ասացի ինքս ինձ,— եթէ այժմ իսկ ամենաոխրիմ թշնամիս առաջս ելնէ, ես պատրաստ եմ նորա դ՛մ գործած բոլոր չարիքը ուղղել։

Եւ լանկարծ դուռը բացուեցաւ և ներս մտաւ մի գծուծ, կնճռոտ թզուկ։ Նորա հասակը երկու ոտնաչափից աւելի չէր լինի. արտաքին տեսքից մօտ քառասուն տարեկան էր երեւում։ Դիմագծերից իւրաքանչիւրը արտաքինը մինչ աչն աստիճանն անկերպարան էր, որ մարմնի ամեն մի մասի վրայ մատնացող անել և ասել, թէ «այս մէկը ակնյալտնի տձեւութիւն է»,—չէր կարելի։ Այդ փոքրիկ մարդն ամբողջապէս մարմնացած տգեղութիւն էր՝ անորոշ, չփոթ, Դէմքի և փոքրիկ շարժուն աչքերի մէջ աղուէսի խորամանկութիւն, չարամտութիւն և արագաշարժութիւն էր դրոշմուած։ Եւ, երևակայեցէք, մարդկային այդ վիժմունքի կտորի մէջ ինչ որ անորոշ հեռաւոր նմանութիւն կար ինձ հետ։ Այդ բանն աղօտ կերպով արտալայտուում էր այդ արարածի արտաքինի, դէմքի, նոյն իսկ հագուստի, շարժումների, սովորութիւնների և կեցուածքի մէջ։ Մի զարմանալի ճշգրիտ փրցուածք էր ինձնից, իմ en miguatur նրբակրկիտ—զազրեկի ծաղրանկարս էր։ Մի աչքի ընկնող բան առանձնապէս անհանդի զարմանք պատճառեց ինձ։ Նա ամբողջապէս ծածկուած էր սոկոնի կանաչաւուն բորբոսով, այնպէս ինչպէս երբեմն քարթու հացն է ծած-

կուած լինում: Նորան նախելիս մարդու փսխանքն էր գալիս:

Ազատ-համարձակ, առանց քաշուելու անցաւ սենեակի միջով և, առանց սպասելու որ նստելու հրաւիրէին, նստեց փոքրիկ տիկնիկի աթոռի վրայ, գլխարկը շարտեց թղթերի դատարկ կողովի մէջ, լատակից վերցրեց իմ հնամաշ գաճաքայէ ծխափողս, մի երկու անգամ նորա զլուխը ծնկանը զարկեց, մօտն եղած ծխախոտի տիկից լցրեց և ինձ դարձաւ անպատկառ հրամալողական եղանակով.—լուցկի տուէք:

Մինչև մազերիս արմատները կարմրեցի, ինչպէս ասում են, մասամբ սաստիկ բարկութիւնիցս, բայց առաւել ալն բանից, որ նորա վարուելու եղանակի մէջ, մի ինչ որ, իհարկէ աւելի չափազանցեցրած, իմ սեփական վարուելու եղանակը լիշեցնող բան կար, որով ես վարում էի իմ մօտիկ մարդկանց հետ, բայց, լամենալն դէպս, երբէք-երբէք, ոչ օտարներին հետ, մտածում էի ինքս ինձ: Կամենում էի գաճաճին զլորել, վառարանը ձգել, բայց բնական և առանց ակնալուծութեան նորա հեղինակութեան առաջ խոնարհւելու մի անորոշ գիտակցութիւն ստիպեց ինձ կատարել նորա հրամանը: Լուցկին մօտեցրեց ծխափողին, մի երկու անգամ մտամոլոր կերպով կուշտ-կուշտ ներս քաշեց ծուխը և բարկութիւն փրթող ընտանեկութեամբ նկատեց.

«Այսօր ասես թէ, անտանելի, սատանի ծոցն երթալու, եղանակ է»:

Նորից կարմրատակեցի դարձեալ զալրութից և նուստացումից, որովհետև նորա լեզուն դարձեալ, չափազանցեցրած կերպով, ծաղրում էր իմ նախկին խօսակցութեանս ձևը և նորն իսկ ձայնի ել և էջը, բառերը երկարցնելու, գրգռելու չափ ծոր տալու սովորութիւնը, ճիշտ և ճիշտ իմ անփութութեանս ոգու արտալատութիւնն էր: Ինձ համար աւելի ծանր վիրաւորանք չէր կարող լինել, քան ալդ իմ ծոր տալու, լեզուիս պակասութեանն ակնարկող ծաղրալի նմանողութիւնը:

—Լսի՛ր, դու, զազրելի կենդանի, վատ չես անիլ եթէ մի փոքր աւելի ուշադրութիւն դարձնես քո ձևերի վրայ, ապա թէ ոչ լուսամտից դուրս կնետեմ քեզ:

Մարդուկը չարախնդաց ինքնաբաւականութեամբ և վրստահութեամբ ժպտաց, արհամարհող հալեացքով ծխի մի քանի բարդ քուլաներ ուղղեց ինձ և աւելի ճարտար կերպով նմանեցնելով իմ ծոր տալուն՝ ասաց.

— Կա-մաց, կա-ա-մաց, Մի փոքր չափդ ճանաչիր, երբ քեզնից լաւագոյնների հետ ես խօսում:

Ամբողջապէս տակն ու վրայ եղալ ալդ սառնարին նկատողութիւնից և միևնույն ժամանակ բոլորական, ստրկութեան հասնելու չափ, ճնշումն զգացի: Թզուկը մի քանի բոլոր նալում էր ինձ իւր քաթար-քօսու աչքերով և ապա շարունակեց աւելի ծաղրական ոճով.

— Այսօր դու դառնդ առաջից աղքատին հաւածեցիր:

Նս լամառութեամբ պատասխանեցի,— գուցէ քչեցի, դուցէ և ոչ: «Դու» ինչ գիտես:

— Գիտեմ: Նւ կարիք էլ չկալ իմանալու, թէ ես որ տեղից գիտեմ:

— Շատ բարի: Ննթադրենք թէ նոյն իսկ աղքատին էլ հաւածեցի: Քեզ ինչ:

— Օ՛ր, ոչինչ, մի առանձին բան չկալ, միայն դու ստեցիր նորա առաջ:

— Նս չեմ ստել, ալսինքն... ես...

— Այո, ալո, դու ստեցիր:

Իսկապէս ինքս ինձ մեղաւոր էի զգում, ալդ բանն աւելի կանխաւ էի զգացել: Եւն բոլորից, երբ աղքատը մի սաժէ-նալափ էլ հեռացած չէր լինիլ իմ դռնից, բալց ալժամ վճռեցի ախպէս ցոյց տալ, որ իբր թէ զրպարտում են ինձ և ասացի.

— Անհիմն լանդգնութիւն է ասածդ: Նս ալդ թափառականին ասացի...

— Սպասիր, սպասիր: Նորից ես փորձում սուտ ասել: Գիտեմ ինչ ես ասել նորան: Ասացիր որ խոհարարը քաղաք էր գնացել և որ նախաճաշից ոչինչ չի մնացել: Կրկնակի սուտ: Գիտէիր, որ խոհարարդ տանն էր և որ ահագին պաշարեղէն ունէիր:

Ալդ զարմանալի ստուգութիւնն ստիպեց ինձ լռել. գլուխ էի կոտրում, թէ ալդ շան լակոտը որտեղից կարող էր իմանալ ալդ բոլորը: Ննթադրենք որ թափառաշրջիկը կարող էր ասած լինել նորան իմ խօսակցութիւնը, բալց ինչ հմալքով էր իմացել խոհարարի մասին: Գաճաճը նորից խօսեց.

— Քո կողմից մինչ ալն փոքրողութիւն, մինչ ալն աստիճան ստորութիւն էր՝ մերժել կարդալ ալդ խեղճ երիտասարդ աղջկալ ձեռագիրը և գրուածքի գրական արժանիքի մասին արտալալտել քո կարծիքը... Այնքան հեռու տեղից և

ալնպիսի լուսերով էր եկել Դէ, ալդպէս չէ:

Շան օրի ընկած էի զգում ինձ և ամեն անգամ երբ մոտաբերում էի ալդ դէպքը, նոյն դուլթեան էի զգում ինձ: Սաստիկ կարմրեցի և ասացի:

— Լսիր, մէ մարդ, դու սեփական բան ու գործ չունիս, որ թողած ուրիշներովն ես զբաղուամ: Աղջկը պատմեց քեզ ալդ բոլորը:

— Ի՞նչ կարիք կալ իմանալու, թէ պատմել է, թէ չէ: Դիւսաւորն ալն է, որ դու ալդպիսի ստորութիւն ես արել: Եւ լետով դու ամաչեցիր արածիցդ: Ը՛հը, դու ալ ժամ էլ ես ամաչում...:

Դիւական հրճուանքով էր արտապտուած վերջին խօսքերը:

Անկեղծ զարույթ զգալով՝ պատասխանեցի:

— Այդ աղջկանը մեղմ, քաղցր եղանակով ասել եմ, որ չեմ կարող համաձայնուել կարծիք լալտեւել որ և է մէկի գրուածքի մասին, որովհետեւ եղակի կարծիքը՝ արժէք չունի: Այդպիսի կարծիքը կարող է ստորացնել մի մեծարժէք գրուածքի լարգը և խել հասարակութիւնից և ընդհակառակը, անարժէք գրուածքը գրուատել և ալդպիսով նորա լոյս աշխարհ գալուն նպաստել: Ես ասել եմ, որ միայն հասարակութիւնն, ամբողջովին վերցրած, կարող է ձեռնհաս դատաւոր լինել գրական փոքի նկատմամբ, ուստի և ամենալաւն ալն կլինի, որ ներկայացնէք ալդ դատական ատեանին, որի զօրեղ դատավճռին կամ կզիմանալ կամ կխորտակուի:

— Այո, ալդ բոլորն ասել ես: Այդպէս ես արել, խաբեքալ, փոքրոգի խարդախ: Իսկ երբ ժպտուն լոյսերն անհետանում էին խեղճ աղջկալ դէմքից, երբ տեսար, որ արագ շարժումով իւր կրկնոցի տակ էր թաղցնում ձեռագիրը, որ ալնքան բարեխղճութեամբ և համբերութեամբ էր գրել, ալնպիսի ամօթ զգալով իւր թանկագին զանձից, որով մի լոպէ առաջ դեռ ես ալնքան հպարտ էր, երբ տեսար, որ ուրախութիւնը մարում էր նորա աչքերում և արցունքով էր ողողում, երբ հեռացաւ ալնպէս ամօթաւար, ալն ինչ եկել էր ալնքան...

— Օ՛, բաւական է, բաւական է, բաւական: Սանձահարիր անգութ լեզուդ: Միթէ բաւական տանջանք չպատճառեցին ինձ ալդ ամենը առանց քո զալուդ էլ, առանց քո լիշեցնելուն:

Խղճի խալթոց, տանջանքներ, կարծես, սիրտս ամբողջապէս կրծել, դուրս կորզել էին կամենում ալդ խալթոցները։ Այն ինչ ալդ փոքրիկ թշնամին էլ եկել նստել է ալստեղ, չարախնդաց արհամարհանքով խեթ խեթ վրաս է նալում, կամացուկ քրքշալով։ Ահա նորից սկսեց վրալ տալ։ Իւրաքանչիւր խօսքը՝ դատապարտութիւն է. ամեն մի դատապարտութիւնը՝ ճշմարտութիւն։ Իւրաքանչիւր ամբաստանութիւնը հեղնութեամբ է ողողուած. ամեն մի դանդաղ արտասանած խօսքը արջասպի պէս ալրում, խորովում է։ Թղուկը լիշեցնում էր ինձ ալն դէպքերը, երբ ես ուրիշների անկարգութեան համար իմ փոքրիկներին էի պատժել, ալն ինչ դործի մի փոքրիկ քննութիւնը ճշմարտութիւնը կպարզէր առաջ։ Յիշեցրեց, թէ ինչպէս անաղնուարար թող էի տալիս իմ ներկալութեամբ զրպարտել իմ բարեկամներին և մինչ ալն աստիճան թուամորթ էի, որ մի բառ անգամ չէի արտասանում նոցա պաշտպանելու համար։ Յիշեցրեց բաղմաթիւ անաղնիւ արարքներս, որոնցից մի քանիսը կատարել էի փոքրների կամ իրաւական արտօնութիւնից զուրկ անձնաւորութիւնները ձեռքով, մի քանիսն էլ որ ես մտածել, որոճացել էի կատարել, բայց չէի իրագործել լոկ միալն ալն պատճառով, որ հետեւանքներիցն էի վախեցել։ Ամենամանրակրկիտ դատն սառնասրտութեամբ քալլ առ քալլ վերարտադրում և լիշեցնում էր ինձ իմ բոլոր անարդարութիւններս, իմ բոլոր չար գործերս, ալն բոլոր ստորացումներս, որոնց ենթարկուել էին մեռած բարեկամներըս իմ կողմից և «որոնք մեռնելիս, գուցէ, մտածում էին սլդ վիրաւորանքների մասին և տանջւում» աւելացրեց նա թոյնը վէրքի մէջ լցնելով։

—Օրինակ, վերցնենք հէնց,—ասաց նա,—սորանից շատ շատ տարի առաջ պատահած դէպքը քո և եղբորդ մէջ, երբ երկուսդ էլ դեռ փոքր երեխաներ էիք։ Նա հաւատում էր քեզ ալնպիսի սիրով և անձնուիրութեամբ, որ նոյն իսկ քո բաղմաթիւ ստոր արարքներդ իսկ խախտել չէին կարող։ Յետեւից՝ հաւատարիմ շան պէս ման էր գալիս, պատրաստ կրելու ալն բոլոր անիրաւութիւններդ և չարաչար զեղծումներդ, լոկ միալն նրա համար որ հետդ լինի. ամենալն համբերութեամբ տանում էր հասցրած վիրաւորանքներդ հէնց ալդ ժամանակ, երբ ձեռքդ գործում էր ալդ բոլորը։ Նորա վերջին նկարը, քաջառողջ և ուժեղ, երեւի շատ մեծ մխիթարութիւն է պատճառում քեզ...

Աչքերը կապեցիր, ազնիւ խօսք տալով, որ ոչ մի վատ բան չես անիւ, իսկ լետով հռհռալով և լալող խաղ սարքած լինելուդ ուրախութեամբ հրճուած, տարար՝ թեթեւ սառուցով ծածկուած գետակի ափը և բրդեցիւր նորան... և ինչպէս էլ ծիծաղում էիր։ Մանրդ, երբէք չպիտի կարողանաս մոռանալ այն քնքով, կատարեալ լանդշիմանութեամբ լի հայեացքը, որ ձգեց քեզ վրայ, աշխատելով սառցակոյտերի միջից աղատուել։ Չես մոռանալ, եթէ նոյն իսկ հաղար տարի էլ ապրես։ Օհ, ալթմ էլ ես տեսնում նորան։ Դու հէնց այս բոպէիս էլ ես տեսնում նորան։

— Անաստն։ Միլիօն անգամ եմ տեսել և դեռ մի միլիօն անգամ էլ կտեսնեմ։ Կորիւր, հեռացիր, թող հեռքդ ու փետուրդ էլ չերևալ, մինչև անեղ դատաստանի օրը քաշես այն տանջանքները, որ ես կրում եմ այս բոպէիս, շնորհիւ այն բանի, որ լիշեցրեց ալդ դէպքը։

Թղուկը ինքնաբաւական քրքշում էր և շարունակեց կեանքիս վերաբերութեամբ՝ իւր ամբաստանական պատմութիւնը։ Դաժան, վրէժխնդիր տրամադրութեան մէջ ընկալ և լռելիսայն տանջում էի նորա անդուծ հարուածների տակ։ Վերջապէս նորա հետեւեալ նկատողութիւնը ստիպեց տեղիցս վեր թռչել։

— Երկու ամիս առաջ, գիշերը, երեքշաբթի, դու դրօսնում և ամօթանքով էիր մտաբերում առանձնապէս աչքի ընկնող ստոր և ողորմելի արարքդ մի խեղճ, աղէտ Հնդկիկ հետ, Ապառաժոտ Լեւոնների վալրի կրճերից մէկում, ձմեռը, հաղար ութ հարիւր...

— Կեցիր, լուր մի բոպէ, դեի դաւակ։ Սպասիր։ Չես կորող պնդել, որ մտքերս անգամ քեզնից ծածուկ չեն։

— Ինչպէս տեսնում ես, ալդպէս է։ Միթէ ալդ ամենը չես մտածել։

— Թող այս բոպէիս անշնչանամ, եթէ չեմ մտածել։ Բայց, մի աչքերիս նալիր, բարեկամ, աչքերիս։ Ո՞վ ես դու։

— Է՛, թնչ ես կարծում։

— Կարծում եմ, որ հէնց սատանան ինքն ես։ Կարծում եմ, որ սաղալէլն ես։

— Ո՛չ։

— Ո՛չ։ Հապա ո՞վ պիտի լինիս։

— Յիրաւի ուղծում ես իմանալ, թէ ո՞վ եմ։

ԼՈՒՄԱՅ

— Իհարկէ, կամենում եմ:

— Լաւ: Ես— քո խիղճդ եմ:

Մի ակնթարթում ուրախութիւն ու հրճուածքն ինձ պատեց: Մռնչալով լարձակուեցի ալդ ստոր արարածի վրայ:

— Անիծեալ, Հարիւր անգամ եմ ցանկացել, որ դու շօշափելի լինէիր, որպէս զի մի վիզդ ոլորել, հոգիդ հանել կարողանալի: Օ՛, մինչ ի մահ վրէժխնդիր կը լինիմ քեզ...

Անմտութիւն: Կալծակն էլ ալնքան արագ չի սահում— անցնում, ինչպէս իմ խիղճս: Այնպէս լանկարծակի, անսպասելի կերպով մի կողմ թռաւ, որ մատներս միայն դատարկօղը սղմեցին, իսկ նա թառած-նստած էր գրքերի պահարանի ծալրին և ծաղրելով «քիթ» էր ցոլց տալիս ինձ: Կրակ-խառնիչը չարտեցի դէպի նա. բայց փստ—անցաւ: Կօր կատաղութեամբ բռնուած ալս ու ալն կողմն էի վազվզում, լափշտակելով և դէպի նա չարտելով ինչ որ ձեռքս էր ընկնում: Գրքերս՝ տեղատարափ անձրեւի նման, թանաքամանները, քարածուխի կտորները մթնեցնում էին օղը և անդադար թռչում դէպի ալդ մարդուկը: Բայց բոլորն էլ իղուր: Ճարպիկ երևութը խուսափում էր ամեն մի հարուածից, ալդ դեռ բաւական չէր, մի լողթական, թունալից ծաղրալի քրքջոց էլ էր բարձրացրել, երբ բոլորովին տանջուած, ջարդուած անթուի վրայ ընկաւ: Մինչդեռ լողնածութիւնից և զրգռումից հեռում և թանջում էի, խիղճս հետևեալ ճարն էր ասում.

— Իմ ամենաբարի գերիս, դու բաւական լիմարն ես եղել, ո՛չ, դու կապովի, ցոլց տալու զիժ ես: Սակալն, միևնուն է, դու միշտ էլ նռնն ես, ամեն ժամանակ էլ է՛չ ես եղել և՛ կլինիս: Ապա թէ ոչ կհասկանալիր, որ եթէ ալս սպանութեանը ձեռք զարկէիր ծանլացած խղճով և զղջացող սրտով, ապա իսկոյն ես ջերմախտից կբռնուէի... Անմիտ: Ես ամբողջ մի տօնն ծանրութիւն կստանալի և չէի կարող դետնից բարձրանալ, ալն ինչ ալնալիսի անհամբերութեամբ վառուած ես ուղում սպանել ինձ, որ խիղճդ փետուրի չափ թեթևացել է: Ես, ահա, ես ալստեղ եմ, ինձ բռնել չես կարող: Նոյն իսկ ամենասովորական ապուշին համարեալ թէ կարող եմ լարգել, իսկ քեզ, ֆհահ...

Ամեն ինչ կտալի, միայն թէ սրտիս վրալ ծանրութիւն ունենալի, որպէս զի ալդ արարածին բռնէի և կեանքից զըրկէի, բայց հէնց ալդպիսի բանկութեանս համար չէի կարողա-

նում զգալ ալդ ծանրութիւնը և իհարկէ երբէք էլ չի զղջալ։
 Ես միայն թախծալից հալեացքով նալում էի վերև՝ իմ տիրոջ
 և լուսահատուել կարող էի, որ կեանքիս մէջ գոնէ մի
 անգամ խիղճս չի ծանրանում, երբ ցանկանում էի։
 Կամաց-կամաց սկսում էի մոմտալ ալդ բալէի տարօրինակու-
 թեան վրալ և հետաքրքրութիւնս սկսում էր գործել։ Մտքումս
 որոնում էի ալն հարցը, որին կարող էր պատասխանել թշնա-
 միս։ Հէնց ալդ բալէին ներս մտաւ փոքրիկներիցս մէկը, դու-
 ուր բաց թողնելով և բացականչեց։

—Վճ, ինչ է կատարում ալստեղ։ Գրքերի պահարանն
 ամբողջապէս ջարդած է...

Սաստիկ անհանգստութեամբ վեր թռալ տեղիցս և գո-
 ռացի։

—Դճ, րս ալստեղից։ Հճռռ... Դէ, շուտ։ Թռիւր։ Դուռը
 փակիր։ Շուտ, թէ չէ խիղճս կփախչի...

Դուռը շրխկաց և ես բանալիքով կողպեցի։ Վերև նալե-
 ցի և մինչև հոգուս խորքը հրճուեցալ, տեսնելով, որ իմ տէրս
 և հրամալողս դեռ ևս գերի է ինձ մտ։

—Գրողի ծոցն երթաւ,—ասացի,—բան չէր մնացել ձե-
 ուիցս պրծնէիր։ Երեսնաներն ամենանզգող շարաածներն են
 ալխարհիս վրալ։ Բալց լսիր, բարեկամ, փոքրիկս, կարծես,
 նոյն իսկ չնկատեց էլ քեզ. սա ինչ բան է։

—Շատ պարզ բան. բացի քեզնից, ամենքի համար ան
 տեսանելի եմ։

Մեծ բաւականութեամբ մտքով գրի անցրի ալդ տեղե-
 կութիւնը։ Ալթմ կարող էի սպանել ալդ չարագործին, եթէ
 առիթ պատահէր, և ոչ ոք էլ չի իմանալ։ Բալց հէնց ալդ
 միտքը մինչ ալն աստիճան թեթեացրեց հոգիս, որ խիղճս
 հազիւ-հազ կարողացաւ իւր տեղը նստած մնալ, որ փուչիկ-
 խաղալիքի նման ղէպի առաստաղն էր դիմում։

—Լսի՛ր, ասացի, ալ խիղճ, արի բարեկամանալը։ Մի
 առ ժամանակ հաշտութեան դրօշ պարզենք։ Չես կարող հա-
 զստանալ մինչև որ մի քանի հարց չառաջարկեմ քեզ։

—Շատ բարի։ Սկսիր։

—Նախ, ինչո՞ւ տեսանելի չէիր առաջ ինձ համար։

—Որովհետեւ առաջ երբէք ալդ յասին ինձ չես խնդրել,
 ալսինքն, չես խնդրել ալթմեան ձևով և տրամադրութեամբ։
 Այսօր ճիշտ ալդպիսի տրամադրութեան մէջ ես և երբ քո ա-

մենաոխերիմ թշնամուդ կանչեցիր,—լիսմ ես,—խսկոյն եկալ,
որովհետեւ հէնց ես եմ ալդ մարդը, թէն դու չէիր էլ կասկա-
ծում ալդ մասին:

—Լճւ. կնշանակէ իմ բացականչութիւնս քեզ տրին և
մարմին տուց:

—Ո՛չ, դա միայն ինձ քո աչքին տեսանելի դարձրեց:
Ես անմարմին եմ, ինչպէս, առհասարակ, բոլոր ոգիները:

Այդ նկատողութիւնը ինձ անհաճոյ զարմանք պատճա-
ռեց,—եթէ նա անմարմին է, հապա թնչպէս պիտի սպանեմ
նորան: Բայց չքմեղս ձևացալ և հաստատուն եղանակով ասա-
ցի.—խիղճ, քո կողմից անքաղաքավարութիւն է ալդքան հե-
ռու նստել: Ցած իջիր և ծխիր մի քիչ:

Իբրև պատասխան ծաղրալից հալեացքի և հետեեալ նկա-
տողութեանն արժանացալ:

—Ցած իջնել ալետեղ, որտեղ դու կարող ես բռնել և
սպանել ինձ: Լճւ. Առաջարկութիւնդ ամենալն շնորհակալու-
թեամբ բացասում է:

—Լաւ,—ասացի ինքս ինձ,—ամեն բանից երևում է, որ
ոգին էլ կորելի է սպանել: Կամ ալս բոպէիս աշխարհիս երե-
սին ոգիներից մէկը կպակսի, կամ թէ խիստ սխալում եմ:

—Բարեկամ... — ասացի բարձրաձայն:

—Սո՛ս... սպասիր մի բոպէ: Ես ամենին քո բարեկամը
չեմ, ալ թշնամիդ: Ես քո «թալը» չեմ, ալ «աղաղ»: Խնդրեմ
ինձ «միւրդ» ասա: Շատ ես առաջ գնացել...

—Այդ տիտղոսները չեմ սիրում:—Ես կամենում եմ քեզ
«սէր» անուանել, և ալն էլ մինչև...

—Այդ մասին հրամանոցդ հետ երկար ու բարակ դատո-
ղութիւն չենք անիլ: Ինչ որ ասում են՝ լսիր և ուրիշ ոչինչ:
Շարունակիր դատարկաբանութիւններդ:

—Շատ լաւ, միւրդ, եթէ ալ տիտղոս չէք ընդունում,
ես միայն կամենում էի հարցնել, երկար ժամանակ դեռ ևս
ինձ համար տեսանելի պիտի մնաք:

—Ընդ միշտ:

Սաստիկ զայրութ և դժգոհութիւն արտալալտեցի:

—Դա ուղղակի անպատուութիւն է: Այդպիսի կարծիքի
եմ: Ամբողջ կեանքիս ընթացքում հետեւել ես և ալն էլ միշտ
անտեսանելի կերպով ես հետեւել: Դա ինքն ըստ ինքեան բա-
ւական մեծ դժբաղդութիւն է, իսկ ալժամ էլ տեսնել՝ թէ ինչ-

պէս քեզ պէս մի ողորմելի արարած շարունակ հետեում է ինձ՝ շուռքիս նման,—ալդ արդէն անտանելի է։ Ահա իմ կարծիքս ձեր մասին, միւրոյդ, խնդրեմ ի նկատի առնէք ալդ։

—Ջաւակիս, ոչ մի խիղճ ինքն իրեն այնքան բաղդաւոր չէ դուռմ, ինչպէս ես, այն բոլորից երբ ինձ տեսանելի դարձրիր։ Ալդ բանն ինձ անպատմելի առաւելութիւն է տալիս։ Այժմ կարող եմ ուղիղ աչքամիջիդ նայել, ծաղրել քեզ, ծանակի առարկայ դարձնել քեզ, իսկ դու շատ լաւ գիտես, թէ որչափ պերճախօս են տեսանելի շարժուածքներն ու դէմքի արտայայտութիւնները, մանաւանդ եթէ օգնութեան է հասնում կենդանի խօսքը։ Ես միշտ կվերաբերուեմ դէպի քեզ քո սովորական աւան-հոգծուոր տուող ձայնի արտայայտութեան եղանակով, տղան։

Ունելիք շարտեցի դէպի նա։ Ոչ մի հետևանք։ Միւրոյդս շարունակեց։

—Հանդարտ, կամաց, մտաբերիր հաշտութեան դրօշակը։

—Ախ, ես մոռացել էլ էի։ Փորձեմ աւելի քաղաքավար լինեմ։ արի դու էլ փորձիր ալդ բանը, տեսնենք ինչ դուրս կգալ։ Փաղաքավարի խիղճ։ Նա էլ իւր տեսակի մի նոր գաղափար է, հիանալի ձեւաւորութիւն, հրաշալի օլիմբադութիւն։ Բոլոր խիղճերը, որոնց մասին երբ և իցէ լսել եմ, ամենքն էլ խալթող, անհանգիստ, ձուտուող, մինչև հոգու խորքը փորփորող, զգուելի վարենիներ են եղել։ Եւ ամեն անգամ էլ մի բան կզտնեն, որպէս զի ամենաչնչին իրողութիւնների պոչից բռնեն ու... սատանի գոգն երթան այնպիսի խիղճերը։ Ես շատ ուրախ կլինէի իմ ծաղկի կամ թոքախտի հետ փոխելի և շատ էլ գոհ կլինէի բաղտիցս։ Ի՛, այժմ ասա տեսնեմ, ինչիցն է որ ալդ խիղճ ասած բանը չի կարողանում մարդուս միանգամից չորհարել ամեն մի լանցանքի համար և լետու հանգիստ թողնում։ Ինչո՞ւ համար է օր ու գիշեր, գիշեր ու ցերեկ շաքաթ առ շաքաթ, լաւիտեան, լաւիտեան հալածում նորան, այն էլ միշտ միևնույն բանի, անցած-գնացած հնացած բանի համար։ Զ՛ը։ Ախր դորա մէջ ոչ միտք և ոչ էլ արդարութիւն կալ։ Իմ կարծիքով՝ այսպէս վարուող խիղճը ամենակեղտոտ ցեխից էլ վատ է։

—Ալդ բանը մեզ դուր է գալիս։ Ալդքանն էլ բաւական է։

—Արդեօք ալդ բանը մարդկանց փորձելու ազնիւ դիտաւորութեամբ էք անում, թէ...

Հարցս ծաղրական ժպիտ արտայայտեց նորա դէմքին, հետն էլ հետևեալ պատասխանը։

—Ո՛հ, սէր, կենրէք խնդրեմ։ Այդ բանն անուժ ենք լոկ միայն նորա համար, որովհետեւ դա մեր զբաղմունքը, մեր արհեստն է։ Դորա նպատակը, ինչ ասել կուզէ, մարդկանց փորձելն է, բայց մենք՝ անձնապէս շահադրդուած գործակատարներ չենք։ Մենք նշանակուած ենք բարձրագոյն հեղինակութեան կողմից և իրաւունք չունենք դատելու։ Մենք հպատակուժ ենք հրամանների, իսկ հետեւանքի մասին պատասխանատու չենք։ Նա իւր ճանապարհը կ'զտնի։ Բայց ես մի առանձին բաւականութիւն եմ զգում ալդպէս անելու։ Մենք, ճշմարիտ է, երբեմն համը հանում ենք մեզ տուած հրամանները ճշտութեամբ կատարելու դժուր, երբ մանաւանդ չարմար առիթ է ներկայանում, իսկ դա միշտ է պատահում։ Մենք հրճուանք ենք զգում ալդ հրամանները կատարելու ժամանակ։ Մեզ հրամայուած է երբեմնակի լիշեցնել մարդկանց իրենց սխալները, բայց մեզ տուած իրաւունքը բաւական ընդլայնում ենք։ Իսկ երբ ձեռներս է ընկնում մարդը, մանաւանդ զգալուն եթէ զգալուն մարդ է, Օ, այն ժամանակ մենք հոգին ենք հանում։ Սա տեսել եմ, օրինակ, թէ Բնչպէս Չինաստանից կամ Ռուսիայից խիղճն եկել է դիտելու ալնպիսի մէկին, որին պատահական սխալանքը ճանապարհից շեղել է։ Սա տեսել եմ ալդ տեսակի մէկին, որ պատահաբար հրացանի է բռնել մի մուշտ երեխայի։ Այդ լուրը իսկոյն տարածուել է ամեն կողմ և ես կցանկանալի, որ երբեք ալդպիսի սխալանքի մէջ չընկնես, քանի որ բոլոր խիղճները աշխարհիս ամեն մի ծալրից չեն հաւաքուել հրճուելու ալդպիսի մի զուարճալի տեսարանով և օգնելու նորա տիրոջը «հախիցը» դալու։ Այդ մարդը զարհուրելի տանջանքների մէջ քառասուն և ութ ժամ սոված, ծարաւ փռուած էր լատակի վրա և վերջ ի վերջոյ հոգին աւանդեց։ Երեխան երեք շաբաթից լետու բոլորովին առողջացաւ։

—Երեւելի մարդիկ են, խօսք չունեմ։ Ինձ ալնպէս է թըւում, թէ ալժմ սկսում եմ հասկանալ, թէ ինչու իմ վերաբերութեամբ ալդքան անհետևողական են եղել։ Իւրաքանչիւր մեղքի բոլոր հիւթերը դուրս քամելու անհամբերութիւնից բռնուած, դուք մարդուն ստիպում էք զղջալ արածի համար բոլորովին միմեանց հակասող ճանապարհներով։ Օրինակ, դու անարդարացի ես համարում ալն թափառականին ասած իմ երէկուալ սուտս և դորա համար տանջուեցաւ։ Բայց հէնց երէկ էր, որ մի ուրիշ թափառականի կատարեալ ճշմարտու-

Թիւն ասացի, ալսինքն թէ թափառաշրջիկ լինելուն ձեռնտու լինել—կնշանակէ վատ քաղաքացի լինել: Ի՞նչ արեցիր դու ալ դ ժամանակ: Ստիպեցիր, որ ինքս ինձ ասեմ: «Հըմ, աւելի լաւ և աւելի գթասրտութիւն ցոյց տուած կ'լինէի, եթէ մի քիչ քաղցրացնէի նորա քիմքը մի անմեղ, փոքրիկ ստի հաքով և զգալ տալի, որ եթէ նորան հաց չեն տալիս, գոնէ վատ էլ է չեն վարում հետը, որի համար կարող է շնորհապարտ լինել»: Եւ Բնչ: Ամբողջ օրը տանջում էի ալ դ պատճառով: Երեք օր դորանից առաջ կերակրեցի մի աղքատի և, պէտք է ասեմ, կերակրեցի իմ սեփական ցանկութեան համաձայն, կարծելով, որ բարի գործ եմ անում: Ի՞նչ իսկոյն ակսեցիր միալար կրկնել. «Կեղծ քաղաքացի, թափառաշրջիկներին է կերակրում»,—և ես դարձեալ խաթթոց ու տանջանք զգացի սովորականի պէս: Ես աղքատին գործ տուի, դու բողոքեցիր և՛ դորա դէմ, արդէն պայմանը կապելուց լետ ու իհարկէ, դու երբէք սովորութիւն չունիս խօսելու բանն աւելուց «առաջ»: Թեոյ ես մերժեցի աղքատին գործ տալ, դու բողոքեցիր և դորա դէմ: Թեոյ մտքումս դրեցի սպանել թափառակաւին, դու չթողեցիր ամբողջ գիշերն աչքս փակեմ, մարմնիս իւրաքանչիւր ծակոտկէնը խաթթոցներով լցնելով: Վերջապէս, ալս անգամ արդէն համոզուած էի, որ արդարացի եմ վալում, —աղքատին լետ դարձրի՝ օրհնելով նորան. բաց Աստուած տալ, որ ձեր հորթը մեր գալլին ուտէ, եթէ դարձեալ ամբողջ գիշերն ինձ չտանջեցիր՝ թէ ինչու չսպանեցի նորան: Արդեօք աշխարհիս վրալ մի հնարք կգտնուի, որ մարդ կարողանալ գոհացնել ալն սատանի ծնունդ գիւտը, որ խիղճ է կոչում:

—Հմ, հմ, հմ: Հիանալի է, հրաշալի է, շարունակ'ը:

—Սպասիր, դեռ հարցիս պատասխանիր,—կմլ ալդպիսի հնարաւորութիւն:

—Ալդպիսի հնարք կալ. գոնէ ես՝ ամենին ցանկութիւն չունեմ ալդպիսի հնարք գտնել քեզ համար, դաւակաւ: Աւանակ, իմ Բնչ գործն է, թէ դու ինչ տես ալ դործ կատարեցիր. իմ գործս ալն է, որ ականջիդ փսփսաս և ստիպեմ քեզ մտածես, թէ սարսափելի ստորութիւն ես արել: Իմ գործս ու ուրախութիւնս ալն է միայն, որ ստիպեմ քեզ զղջաս բոլոր արածներիդ համար: Եւ եթէ որևէ դէպք մոռացել եմ, ալդ էլ բոլորովին պտտահաբար, անգիտակցաբար է եղել, հաւատացնում եմ քեզ:

—Անհոգ եղիր, ամենաչնչին բանն էլ չես մոռացել, որ քան լիշողութիւնս ինձ չի դաւաճանում, Երբէք, ամբողջ կեանքիս ընթացքում, աչնպիսի բան չեմ արել, որի համար քսանն և չորս ժամ շարունակ զղջալի։ Անցեալ կիւրակէ եկեղեցում բարեգործութեան մասին մի քարոզ էի լսում։ Իմ առաջին ինքնաբերական ցանկութիւնս աչն եղաւ, որ ղոհաբերեմ երեք հարիւր լիսուն դոլլար, բայց զղջացի և ողորմութեանս քանակը հարիւր դոլլար իջեցրի։ Ղարձեալ զղջացի և հարիւր դոլլար էլի իջեցրի։ Կրկին զղջացի և էլի հարիւր դոլլար իջեցրի։ Ղորա համար էլ զղջացի և մնացած լիսունից քսանհինգն էլ իջեցրի։ զղջացի և թողեցի միայն տասնհինգ։ մէկ էլ զղջացի և թողեցի միայն $2\frac{1}{2}$ դոլլար։ և երբ, վերջապէս, ինձ մօտ բերեցին զանձանակի տուփը ես վերջին անգամ զղջացի և դրի միայն տասը ցէնտ։ Լաւ։ Երբ տուն եկալ, իմ մէջ ցանկութիւն ծագեց ալդ տասը ցենտն էլ լետ ստանալ։ Երբէք չես թողնում բարեգործական քարոզներ լսեմ։ ամեն անգամ էլ մի խաղաղակութիւն պիտի հանես անպատճառ։

—Օ՛, երբէք էլ չեմ թողնիլ, երբէք։ Ամեն ժամանակ էլ ինձնից կախումն պիտի ունենաս։

—Ենթադրում եմ, որ ալդպէս էլ պիտի լինի։ Շատ, բազմաթիւ անքուն գիշերներ մտքովս անցել է, որ մի հնար գտնէի ձերիդ ձեռք ընկնէր։ Գոնէ ալ ժմկարողանալի մի «եախէտ» հաւաքել։

—Իհարկէ, ինչ ասել կուզի։ Բայց մի մոռանալ, որ ես աւանակ չեմ, ալ չորա համետը։ Լաւ, շարունակիր, տեսնենք։ Դու աւելի ես պահանջում, քան կկամենալի բաց անել...

—Շատ ուրախ եմ ասածիդ համար։

—Չես նկատում իմ փոքրիկ խարդախութիւնս

—Լսիր, տօ, իսկապէս՝ եթէ անկողննապահ լինե՞նք մի րոպէ, պէտք է ասեմ, որ քեզնից աւելի զաղքելի, առելի, լապաւակաւած սողունի չեմ պատահել ե չի էլ կարելի երևակայել։ Շատ ուրախ եմ, որ ուրիշներին գոնէ անտեսանելի եռ. ամօթից գետին կմտնէի, եթէ տեսնէին, որ քեզ պէս բորբոսակալած, կապկանման խիղճ ունիմ։ Եթէ նոյն իսկ հինգ կամ վեց ոտնաչափ հասակ էլ ունենալիր...

—Խնդրեմ, խնդրեմ։ Ի՞նչ է մեղաւոր ղորա մէջ։

—Չգիտեմ։

—Ախր չէ որ միայն դու և ուրիշ ոչ ոք։

—Գետին անցնես... Կարծեմ հետս երբէք չեն խորհրդակցել արտաքինիդ վերաբերութեամբ։

—Միննորն բանն է, արնուամենայնիւ դու շատ ես նպաստեւ իմ ալլանդակութեամբ։ Սրբ ութ կամ ինը տարեկան էիր, ես եօթ ոտնաչափ հասակ ունէի, դեղեցիկ՝ ինչպէս նկար...

—Ափսոս, հազար ափսոս, որ երեխալ ժամանակդ չես մեռել, կնշանակէ հակընթաց կերպով ես մեծացել, հա՛:

—Մեզնից ոմանք դէպի վեր են հասակ քշում, ոմանք էլ—դէպի վար՝ նալելով հանգամանքներին։ Մի ժամանակ խիղճդ մեծ էր. իսկ եթէ ավժամ փոքր է,—կնշանակէ իւր պատճառներն ունի. սակալն արդտեղ երկուսս էլ մեղաւոր ենք թէ ես և թէ դու Դու շատ բաների մէջ բարեխիղճ լինելու սովորութիւն ունէիր, ուզում եմ ասել հիւանդութեան հետք բարեխիղճութիւն։ Դա շատ առաջ էր, շատ տարի առաջ։ Սրերի, ալժամ, չես լիշիլ ալդ։ Այնպէս էի տարուել պարտականութիւններս կատարելով և այնպէս էի հրճում ալն տանջանքներով, որ պատճառում էին քեզ մի քանի մանր-մուշր սխալանքներ որ ձեռք չքաշեցի մինչ ալն լրպէն մինչև որ համը չհանեցի։ Դու սկսեցիր գրգռուիլ և ընդվզել, ես—ոտքիս տակի հողը կորցնել, կուչ գալ, փոքրանալ, կեղտոտուել ու ալլանդակուել։ Որքան ես թուլանում էի, ալնքան դու աւելի ամուր էիր կալում ալդ պատահական սխալանքներին մինչև ալն ժամանակ, երբ, վերջապէս, ալդ սխալանքներին համապատասխանող մարմնիս մասերը՝ չալնդացան և չամրացան ձկան թեփի նման։ Օրինակ, հէնց, ծխելդ վերցնենք, Բաւական երկար խաղացի ալդ խաղալիքի հետ, մինչ որ խաղս ձեռք տանուլ չտուի։ Սրբ ամենքը համոզում էին քեզ քաշել ալդ ախտից,—ալդ հին, կոշտացած տեղը, կարծես, մեծացաւ, ընդլալնուեցաւ և ծածկեց ինձ ամբողջովին՝ վերտի պէս։ Խորհրդաւոր, խեղդուող ազդեցութիւն է թողնում ալդ բանը և ահա ես, քո հաւատարիմ ատեւիդ, քո անձնուէր խիղճդ խոր քնի մէջ եմ ընկզմում։ Խնր։ Բալց ալդպիսի քունը անուն անգամ չունի։ Ալդ ժամանակ որոտ էլ տրաքի ականջիս տակ՝ չեմ լսիլ։ Դու դեռ ալդ տեսակ մի քանի մոլութիւն ունիս, ութսուն, գուցէ և, իննսուն հատ, որոնք նոլնպիսի ազդեցութիւն են թողնում ինձ վրա։

—Շատ քրքրուած եմ ձեր հաճոյախօսութիւնից. դուք, երեւի, ամբողջ ժամանակը քնած էք.

—Այո, նախկին տարիները քնում էի։ Հէնց ալժամ էլ կը քնէի, եթէ օգնութեան հասնող չլինէր։

—Ո՞վ է օգնում։

—Միւս խիղճները, Երբ մէկը, որի խղճի հետ ծանօթ եմ, աշխատում է համոզել քեզ ձեռք քաշել քեզ լափող ախտերից, ես խնդրում եմ բարեկամիս որ իւր թևարկուն խղճի խաթոց զգալ տալ իւր լարանման մի լիմարութեան համար և ալդ բանն իսկոյն արգելում է նորա միջամտութիւնը և ստիպում է իւր խղճի հանգստութիւնը որոնել։ Այժմ գործունէութեանս ասպարէզը սահմանափակուած է միայն թափառաշրջիկներով, գրող սկսնակուհիներով և ալդ տեսակ «թաբուուկա»-ներով, Բաց անհանգիստ մի լինիր, քանի ալդպիսիները դեռ գոյութիւն ունին, նոցանով պիտի զանլէդ տանեմ։ Բողբովին կ'որոշ ես ապահով լինել։

—Կարծում եմ, որ կարող եմ։ Բաց եթէ դուք այնքան բարի լինէիք, միւրոգ, որ ալդ մասին մի երեսուն տարի առաջ լիշեցնէիք ինձ, ապա ես առանձին ուշք կ'դարձնէի սխալանքներին վրայ և կարծում եմ, որ մինչ այս ըոպէիս ոչ միայն ձեզ լախտեանս խոր քննցրած և մարդկային արատների վերաբերութեամբ անզգալ դարձրած կ'լինէի, այլ և նմանաբուժական (гомеопатія) ամենափոքր ղեղահատիկի չափ շինած կ'լինէի։ Այս տեսակ խղճի համար կարելի էր միայն ցաւել։ Եւ միթէ ձեզ ալդ տեսակ նմանաբուժական ղեղատիկ դարձնելուց լետող, ապակեալ ծածկոցի տակ կ'դնէի և ի լիշատակ կ'պահէի։ Ո՛չ, պարոն, շների առաջ կ'գգէի ձեզ։ Ամենալարմար տեղն է դա ձեզ, ձեզ նմանների և առհասարակ ձեր գարշելի ցեղակիցների համար։ Իմ կարծիքով, դուք երբէք հասարակութեան մէջ տեղ ունենալու համար չէք ստեղծուել։ Այժմ մի այլ հարց, — մեր կողմերում շատ խղճեր կան։

—Բազմաթիւ։

—Շատ բան կտալի, եթէ կարողանալի գոնէ մէկին տեսնել։ Չեմ կարող մի նոցա ալստեղ բերել։ Արդեօ՞ք ինձ համար նոքա տեսանելի կարող են լինել։

—Ի հարկէ, ոչ։

—Ինքա պիտի հասկանալի ալդ և նոյն իսկ չհարցնէի։ Բաց միևնոյն է։ Դու կարող ես նկարագրել։ Պատմիր, խնդրեմ, իմ հարեանիս՝ Տոմսոնի խղճի մասին։

—Շատ բարի։ Շատ մօտ ծանօթ եմ. ճանաչում եմ շատ Վլադուց։ Ճանաչում էի դեռ ալն ժամանակ, երբ տասնեմէկ տոնաչափ հասակ ունէր և արտաքինով ոչինչ պակասութիւն չունէր. իսկ այժմ անճոռնի, կպչուն և ոչնչով չհետաքրքրող մի բան է դարձել։ Իսկ ինչ վերաբերում է հասակին, կ'անեմ որ այժմ ծխախոտի տուփի մէջ է քնում։

— Շատ հաւանական է. մեր կողմերում Հուգօ Տօմսոնի նման զարչելի, բժախնդիր մարդ հազիւ գտնուի: Իսկ ծանօթ ես Ռօբենսոնի խղճի հետ:

— Այո՛, դա չորս կամ չորս ու կէս ոտնաչափ բարձրութեամբ մի ուրու է. առաջ խարտեալ էր, ալժամ թխահեր է դարձել, բայց էլի գեղեցիկ և հաճելի է:

— Ճշմարիտ է. Ռօբենսոնը լաւ տղալ է: Ճանաչում ես Տօմ Սմիտի խիղճը:

— Մանկութիւնից, երկու տարեկան ժամանակից ճանաչում եմ: Տամաներք ոտնաչափ հասակ ունէր, մի փոքր էլ անհոգ բնաւորութիւն, ինչպէս առհասարակ մենք ամենքս ենք լինում ալդ ժամանակ: Ալժամ երեսունեօթ ոտնաչափ է. Ամերիկայում մեզնից ամենավեհն է: Նորա ոտները դեռ ևս ցաւում են մեծանալուց. ժամանակ շատ ունի: Երբէք չէ քնում: Խիղճերի նոր-անզղիական ակմբի և ամենագործունեալ եռանդուն անդամն է: Ակմբանոցի նախագահն է: Դուք օր ու գիշեր կարող էք տեսնել, թէ ինչպէս է կռծում խեղճ Սմիտին սոթտած վեր քշտած թեւերով, ուրախութիւնից փալլող դէմքով հրճուելով իւր արածի վրալ: Ալժամ ախպէս է տիրել իւր զոհին, որ էլ ինչ ասեմ: Կարող է ստիպել խեղճ Սմիտին երեւակայելու, որ իւր ամենանմեղ արարքը—մի զգուելի ոճիր է: Պէտք է տեսնել թէ ինչպէս ալզպիսի դէպքերում գործի է կաշում և խեղճի հոգին քթածակերից հանում:

— Սմիտն ամենազնիւ մարդն է մեր կողմերում և միևնոյն ժամանակ ամենանմեղը, միշտ էլ տանջւում է, որ չի կարող լաւ մարդ լինել: Միայն խիղճը կարող է ալզպիսի մարդուն տանջելուց զուարճութիւն զգալ: Մանօթ քս իմ մօրաքույր Մէրիի խղճի հետ:

— Հեռուից տեսել եմ, բայց ծանօթ չեմ հետը: Նա բաց երկնքի տակ է ապրում, որովհետեւ դուռ չկալ, որով կարողանալ ներս մտնել:

— Հաւատալ կարող եմ: Լսիր, ծանօթ ես ալն հրապարակախօսի խղճի հետ, որը մի անգամ իմ ոտանաւորներս իւր «ժողովածուն» հրատարակեց օր ցերեկով և ստիպեց ինձ դատաստանական ծախքեր էլ վճարելու, որ գլխիս բերի՝ նորան հեռացնելու համար:

— Այո՛, նա մեծ համբաւ վաստակեց: Մի ամիս առաջ միւս ակնլաւտնի անձերի հետ նորան էլ էին ցոյց տալիս ցուցահանդիսում՝ լօզուտ աքսորանքի մէջ տառապող խղճի ակմբի

նոր անդամի, Մուսքի տոմսակն ու փոխադրութիւնը շատ թանձ էր, բայց ես ձրիապէս տեղ հասալ, ներկայանալով իբրև հրատարակչի խիղճը և կէս գնով մտալ, անուանելով ինքզինքս քահանայի խիղճ: Սակայն հրապարակախօսի խիղճը, որ ցուցահանդիսի գլխաւոր հրապուրք էր, կատարեալ անկաշողութիւն կրեց: Ճշմարիտ է այնտեղ էր, բայց քնչ օգուտ: Ցուցահանդիսի վարչութիւնը նորան դրել էր խոշորացուցի տակ, որ միայն երեսուն հազար անգամ կարող էր մեծացնել, և ոչ ոք չկարողացաւ նկատել նորան: Ընդհանուր ղալրովթ առաջ բերեց, բայց...

Հէնց ալդ րօպէին սանդուղտների վրալ արագ քալլերի ձալն լսուեցաւ: Դուռը բաց արի և մօրաքուր Մէրին սենեակ նետուեցաւ: Հանդիպումը ուրախ էր. ընտանեկան իրողութիւնների նկատմամբ հարցերն ու պատասխանները կարկոթ պէս էին թափւում: Վերջապէս մօրաքուրս ասաց.

— Իսկ ալժմ պէտք է մի քիչ ամաչեցնեմ քեզ: Մեր տեսակցութեան վերջին օրը խօստացար ինձ այն անկիւնում ապրող խեղճ ընտանիքի պէտքերը հոգալ նոյնպիսի եռանդով: Ինչպէս ես էի անում: Է՛, ալժմ պատահաբար իմացալ, որ խոստումդ չես կատարել: Արածդ լաւ բան է:

Ճիշտն ասեմ, մի անգամ գոնէ չեմ էլ մտաբերել ալդ ընտանիքը և ալժմ ոտից գլուխ մեղաւոր էի դգում ինձ և խիստ տանջւում: Աչքս խղճիս վրալ ձգեցի: Իմ հոգեկան ծանր դրութիւնս սաստիկ ներգործել էր նորա վրալ մարմինը կոտցել, քիչ էր մնում պահարանի գլխից վալր գլորուէր: Մօրաքուրս շարունակում էր.

— Ախր մի մտածիր, թէ ինչպէս աղքատանոցից վերցրած իմ խեղճ թնարկուհին երեսից ձգել ես, ալ դու սիրելի, քարասիրտ խաբեբալ:

Խեղճետնի նման կարմրեցի, լեզուս չէր հնազանդւում ինձ: Իմ դատապարտելի անհոգութեան դիտակցութեան աւելի ու աւելի ծանր ու անտանելի էր դառնում: Խիղճս սկսեց լատ ու առաջ ճօճուել, և ելբ մօրաքուրս վշտացած ձայնով շարունակեց,—

— Եւ որովհետեւ դու երբէք, մի անգամ գոնէ չես այցելել նորան, ուստի և, հաւանականօրէն, քեզ չի էլ վշտացնի: Եւ լուրը, թէ ալդ փոքրիկ մանկիկը մի քանի ամիս առաջ մեռել է բոլորովին անօգնական և երեսից ձգուած,— խիղճս ալլ ևս անկարող լինելով տանել տանջանքներս ծանրութիւ-

— Եւ՛, գլխիվար ընկաւ իւր թառած տեղից լատակի վրայ, խուլ արճճէ ծանրութեան ձայն հանելով։ Անտանելի տանջանքներից կուշ ու ճիգ անելով և երկիւղից դողալով պառկած էր լատակի վրայ և ամեն ճիգ գործ էր դնում տեղիցն ենելու։ Տենդային արագութեամբ թռալ դռան մօտ, կողպեցի, մէջքս դէմ տուր նորան և աչքս չէի հեռացնում թփռատացող հրամանատարիցս։ Մատներս արւում էին մահառիթ գործիս կպչելու անհամբերութիւնից։

— Ա՛խ, ինչ պատահեց քեզ, — բացականչեց մօրաքորս, հեռանալով ինձանից և սարսափահար աչքերով դիտելով հալեացքներս։ Ես հնում և ընդհատ ընդհատ շնչում էի և հագիւ էի կարողանում զսպել լոլոներս։

— Ա՛խ, ի սէր Աստուծոյ, արդպէս մի նալիլ, վախեցնում ես ինձ։ Ի՞նչ բան է։ Ի՞նչ ես անում։ Ինչո՞ւ ես արդպէս նալում, Ի՞նչ ես անում մատներդ։

— Լռի՛ր, ճիկի՛ն, — ասացի խռպոտ շնչոցով, — միւս կողմը նալի՛ր և վրաս ուշադրութիւն մի դարձրու։ Ոչինչ, դատարկ բան է։ Շատ անգամ է ինձ նետ արսպիսի բան պատահում։ Մի րոպէից ամէն ինչ կանցնի։ Չափազանց ծխելուցս է...

Պարտութիւն կրած միլորդս սարսափից կարկամած և վալքենի աչքերով աշխատում էր սողալով մի կերպ իրեն դռան մօտ ձգել շաղիւ էի կարողանում շունչ քաշել։ Մօրքորս մատներս ջարդում էր և ասում։

— Օ՛, գիտէի, որ վերջն արդպէս պիտի լինէր։ Գիտէի, որ արդպէս էլ պիտի վերջ ունենար։ Օ՛, պաղատում եմ թեղ ալդ կորստաբեր սովորութիւնդ, քանի ուշ չէ։ Դու չես կարող, չպէտք է խուլ լինես իմ աղաչանքների առաջ։ (Թփռատացող խիղճս լանկարծ լոգնածութեան նշաններ ցոլց տուեց)։ Օ՛, խոստացիր, խոստացիր, որ մի անգամ ընդ միշտ ձեռք կքաշես ծխախոտի ալդ անպատուաբեր գերութիւնից։ (Խիղճս սկսեց քնէածի պէս օրօրուել — հիանալի տեսարան)։ Խնդրում եմ, երդուեցնում եմ քեզ։ Աղաչում եմ։ Ուղեղդ, արդէն, հրաժարւում է ծառաւելուց։ Աչքերդ խելագարի աչքերի պէս են փալլում։ Լսիր, լսիր ինձ և դու փրկուած ես։ Տես, ծնկաչօք եմ աղերսում քեզ, — սչս ասելու ժամանակ նա չոքեց առաջս (Խիղճս դարձեալ սկսեց օրօրուել, թալկահար գետին ընկաւ և մի վերջին ծանր, աղերսող հալեացք ձգեց վրաս...)։ — Օ՛, խոստացիր, թէ չէ կորած ես։ Խոստացիր և ազատ կլինիս։ Խոստացիր, խոստացիր և ապրի՛ր, — (երկար, քնափ հռաչով

լաղթահարուած խիղճս աչքերը փակեց և խոր քնի մէջ ընկաւ)։

Յաղթական բացական թեամբ թաւ մօրաքորջս մօտից և մի ակնթարթում ձեռքս առաւ իմ լաւիտեանական թշնամուս օձիքը։ Այդքան երկար տարիներ համբերելուց և անձկութեամբ սպասելուց լեռու, վերջապէս, նա իմս էր Բզիկ-բզիկ արի նորան, այդ կտորտանքները մանրացրի, արիւննաներկ զանգուածը կրակի մէջ ձգեցի և մի առանձին բաւականութեամբ հոտոտեցի զո՞ւրբերութեանս հոտը։ Վերջապէս՝ լաւիտեանս մեռաւ խիղճս։

Էլ ազատ մարդ էի։ Յետ դարձաւ դէպի իմ խեղճ, սարսափից կիսամահ մօրաքորջս և գոռացի։

— Զեռք քաշեցէք ինձնից և հանդիստ թողեցէք ինձ ձեր թշուառներով, ձեր ողորմածութեամբ, ձեր ուղղելու ձգտումներով, ձեր անիծուած բարոյագիտական «տուտուց» քարոզներով։ Զեր առաջ կանգնած է մէկը, որի կեանքի մաքառումն աւարտուած է, որի սիրտը լաւիտեանս մեռած է տրտմութեան համար, մահացել է գթալու համար, հանգել է զղջման համար, ձեր առաջ կանգնած է մէկը, որը խիղճ չունի։ Ուրախութեանս էք պարտական, որ խնայում եմ ձեզ, ապա թէ ոչ կարող էի խեղդամահ անել ձեզ և երբէք խղճի խալթոց չզգալ։ Փախէք։

Նա դուրս փախաւ։ Այդ օրումանից՝ իմ կեանքս—երջանկութիւն է, անընդհատ երջանկութիւն։ Աշխարհումս ոչ մի բանով չի կարելի համոզել ինձ, որ ես երբ և իցէ դարձեալ խիղճ կունենամ։ Սո դէն չպրտեցի։ Առաջին երկու շաբաթն երեսուն և ութ մարդ սպանեցի, բոլորին էլ հին հաշիւների համար։ Այրեցի մի տուն, որ տեսնել չէի կարող, խեցի մի ալրուց և ոյրերից նոցա վերջին կովը, շատ լաւ կովը, բալց, կարծես, շատ էլ ազնիւ ցեղից չլինէր։ Ամեն տեսակ լանցանք և ոճիր էի գործում և հրճում էի արածովս, այն ինչ առաջ, անշուշտ, սիրտս կճմէին և մազերս կսպիտակեցնէին։

Ի վերջոյ, լալտարարում եմ, որ համալսարանների բժշկական բաժինները, եթէ կկամենան գիտական նպատակների համար ձեռք բերել լաւ տեսակի թափառաշրջիկներ,—ամբողջական, սափէններով կամ տոններով,—շատ լաւ կանեն, եթէ նախ իմ ժողովածուս աչքի անցնեն, ապա թէ ալ տեղ չիմեն, ժողովածուս հաւաքած և պատրաստուած է իմ ձեռքովը և կարելի է արժան դնով էլ տալ, որովհետեւ մտադիր եմ առաջիկայ դարնաւ համար նոր ապրանք պատրաստել։

Յ. Վ.